

Անհապաղ թողարկման համար
Նոյեմբերի 21, 2006թ.

Պատասխանատու անձ՝ Արսեն Ասլանյան, ՀՌԿԿ-
Հայաստանի ծրագրերի ղեկավար
Էլ. փոստ՝ crrc@crrc.am, հեռ. 58-13-30, 58-14-50

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՌԿԿ) – Հայաստանը հրապարակեց «Տվյալների հավաքագրման նախաձեռնություն» ծրագրով 2006թ. իրականացված հետազոտության արդյունքները

Հայաստանի Հանրապետություն, Երևան – Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ–Հայաստանն այսօր հրապարակեց «Տվյալների հավաքագրման նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում 2006թ. ընտրանքային հետազոտության արդյունքները: Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում միաժամանակ իրականացված այս տարածաշրջանային հետազոտությամբ ընդգրկվել են շուրջ 6.900 տնային տնտեսություններ: Հարցվողներին առաջադրված ավելի քան 120 հարցերի պատասխանները թույլ են տալիս գնահատել Հարավային Կովկասի երեք երկրներում բնակչության դիրքորոշումներն ու վարքագիծը, ինչպես նաև ժամանակի ընթացքում դրանց փոփոխությունները: 2006թ. հետազոտությունը նշանակալից է ՀՌԿԿ-ի համար. «Տվյալների հավաքագրման նախաձեռնություն» ծրագրի իրականացման երրորդ տարում այն ընդլայնվելով ներառել է Հարավային Կովկասի երեք երկրների բոլոր շրջանները/մարզերը:

«Տվյալների հավաքագրման նախաձեռնությունը» վեր է հանում մի շարք հետաքրքիր հարցեր, որոնք կարող են դառնալ հետագա սոցիոլոգիական և լրագրողական հետազոտությունների առարկա: Օրինակ, ինչու՞ է արական սեռի ծխողների թվով Հայաստանը տարածաշրջանում շարունակում մնալ առաջինը. թեև Երևանում արական սեռի ծխողների բաժինը նվազել է, այն ներկայումս 12%-ով ավելի բարձր է, քան Բաքվում և 5%-ով էլ՝ քան Թբիլիսիում: Կամ, ի՞նչպես բացատրել հայաստանաբնակների և ադրբեջանցիների անտեղյակությունը կամ անտարբերությունը իրենց երկրի ՆԱՏՕ-ին անդամակցելու վերաբերյալ. բնակչության զգալի մասը (41%-ը Երևանում և 35%-ը Բաքվում) դժվարացել է պատասխանել այն հարցին, թե իրենց երկիրը պետք է արդյո՞ք անդամակցի ՆԱՏՕ-ին:

Հետազոտության արդյունքները բացահայտում են նաև տնտեսական զարգացման որոշ միտումներ: Օրինակ, Երևանում անձնական օգտագործման համակարգիչներ ունեցող տնտեսությունների բաժինը 2004 թվականի 15%-ից 2006 թվականին հասել է 21%-ի, մինչդեռ գյուղական վայրերի տնային տնտեսությունների միայն 3%-ում է առկա անձնական օգտագործման համակարգիչ:

Սոցիալական ինստիտուտների վերաբերյալ «Տվյալների նախաձեռնության» արդյունքները քննարկման նյութ են առաջարկում նաև քաղաքական գործիչներին և քաղաքագետներին: Հայաստանում մարդիկ չեն վստահում սոցիալական ինստիտուտների մեծ մասին. 2006թ. միայն 15%-ն են վստահություն հայտնել Ազգային ժողովի նկատմամբ:

«Տվյալների հավաքագրման նախաձեռնություն» ծրագրով հետազոտությունը պարունակում է հարցաթերթի առանձին բաժիններով ստացված տվյալներ ժողովրդագրության, կրթության, քաղաքական դիրքորոշումների, սոցիալական ինստիտուտների, միգրացիայի, հանցագործության, առողջապահության և տնտեսական վարքագծի վերաբերյալ: «Տվյալների հավաքագրման նախաձեռնությունը» կբարելավի տարածաշրջանի մասին տվյալների որակն ու հասանելիությունը», - ասում է ՀՌԿԿ ծրագրի տարածաշրջանային տնօրեն, դոկտոր Հանս Գուբերդովը: Նա կարծում է, որ «վերջին հաշվով, ՀՌԿԿ տվյալների շտեմարանները տեղական և արտասահմանյան հետազոտողներին, ինչպես նաև քաղաքական գործիչներին հնարավորություն կտան համագործակցելու և երկխոսություն սկսելու իրենց երկրներում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ»:

ՀՌԿԿ-ն հետազոտական ռեսուրսների և ուսումնական կենտրոնների ցանց է հիմնադրված 2003 թվականին Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում՝ Հարավային Կովկասում հասարակագիտական հետազոտություններն ու պետական քաղաքականության վերլուծությունը խթանելու նպատակով: Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա հիմնադրամի և պետական համալսարանների համագործակցությամբ գործող ծրագիրը գիտնականներին և քաղաքական գործիչներին առաջարկում է համատեղ հետազոտությունների, դասընթացների և տարածաշրջանային համագործակցության բազմաթիվ հնարավորություններ: ՀՌԿԿ ծրագրերի և անկախ խորհրդատվական մարմինների անդամների մասին տեղեկությունների համար դիմեք.

ՀՌԿԿ-Հայաստան. Երևան 375025, Աբովյան փող., 52, 3-րդ. հարկ: Հեռ./ֆաքս՝ 58-13-30, 58-14-50; crrc@crrc.am; www.crrc.am
Վրաստանում և Ադրբեջանում ՀՌԿԿ գործունեության մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք www.crrccenters.org: